Միրարփի ԴԱՎԹՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրաբարի բառային կազմում որոշակի շերտ են ներկայացնում ժամանականիշ բառերը, որոնք գործածության լայն շրջանակներ են ունեցել լեզվի զարգացման բոլոր փուլերում՝ գրաբարում, միջին հայերենում և աշխարհաբարում:

Գ. Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» գրքում առանձնացնում է բառերի իմաստային թեմատիկ 23 խումբ, որի 10-րդ կետը ժամանակ ցույց տվող բառերն են՝ *հին, ծեր, այժմ, միշտ, հաճախ, ստեպ, օր, գիշեր, ցերեկ, ամառ, աշուն, ձմեռ, գարուն, ամառ* և այլն[1]:

Լ. Հովհաննիսյանը «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն» գրքում նշում է, որ ժամանակ հասկացության նախագրաբարյան (վաղնջահայերենյան) հետքեր չկան, իսկ գրաբարում արդեն գործածում էին ժամանակ և ամանակ բառերը՝ վերջինիս ոչ հաճախ կիրառությամբ: Նա հավանական է համարում վաղնջական շրջանում ժամանակ հասկացության արտահայտումը աւուր բառով[2]:

Ժամանակ հասկացությունն այն առանձնահատկությունն ունի, որ ճանաչելի է իր կոնկրետ դրսևորումների՝ բնության մեջ անխախտ հաջորդականությամբ միմյանց փոխարինող երևույթների շնորհիվ[3]: Ժամանականիշ բառերը լայն գործածություն են ունեցել թե՛ Ոսկեդարի մատյաններում, թե՛ «Աստվածաշունչ» մատյանում: Հմմտ.

Առաջի <u>ամսուայ</u> տասնեւչորսին իրիկուայ դեմ զատիկ է Եհովայի համար /Ղեւ. ԻԳ. 23/: Այս յիսուներորդ <u>տարին</u> Ցորելեան <u>տարի</u> լինի ձեզ համար…/Ղեւ. ԻԵ.25/

Ժամ բառը գրաբարում բազմիմաստ է: ՆՀԲ-ում հանդիպում են հետևյալ իմաստները.

1. չափ շարժման արևու՝ որպէս մասնիկ ամանակի՝ բաղկացեալ ի վաթսուն բոպէից, 2. որպես ժամանակ ինչ նշանակեալ, սահմանեալ, 3. ըստ ախտաբաց՝ Դիտելի մասն բոպէի ի կենդանակերպս, յաստեղատունս վասն գուշակելոյ, 4. ըստ տոմարագիտաց՝ Բաժանումն բոպէից՝ ի սկզբան տուրնջեան և գիշերոյ, 5. ժամասացություն:

«Առձեռն բառարանում». 1. մասն ժամանակի, 2. ատեն, 3. մասն բոպէի յաստեղաց շարժման և վայրկեան ծննդեան ըստ առասպելաց ախտարաց, 4. բաժանմունք բոպէից ըստ տոմարագիտաց՝ արև ցաթելու և մտնելու ատենները, 5. տարույն եղանակները, 6. ժամերգութիւն:

---

[1] *Ջահուկյան Գ., «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան», Եր., 1987, էջ 204-222:*

[2] *Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, Եր., 2008, էջ 73, 79:*

[3] *Բառնասյան Ջ., Ժամանականիշ բառերը բարբառներում, Եր., 2009, էջ 115:*

Հր. Աճառյանը վկայում է ժամանակ բառի վաղ գրաբարյան աղբյուրներում հաճախակի կիրառության մասին և առավել հավանական է համարում պահլավական փոխառություն լինելը՝ ժաման+ակ ձևով[4]:

Ժամանակ բառի համար տրվում են հետևյալ իմաստները. 1. ատեն, 2. Տարի, 3. հասակ, մարդու կեանք, 4. դար, 5. վախճան կենաց, 6. չորս եղանակ տարւոյ, 7. ներկայ վայրկեան, 8. յարմար ատեն, 9. ժամադրութիւն և այլն:

Գրաբարում գործածական են եղել նաև բոպէ, վայրկեան բառերը, որոնցից վերջինը գործածել են միայն Խորենացին և Բուզանդը՝ վայրիկ (մի) ձևով, որտեղ բառիմաստը մեկ վաթսուներորդ մասը չէ, այլ կարճ ժամանակամիջոց, պահ[5]: Երկուսն էլ, ի տարբերություն ժամանակի, հետին գործածություններ են: Հմմտ.

Անցաք ի սուրբ տեղիսն երկրպագել, և մնալ վայրկեան ի Պաղեստինացւոյ հրահանգս (Խոր., 344): Զի ասէին. Վայրիկ մի ևս սակաւիկ մի ևս կալցիս ժոյժ և ահա հասեալ է օգնականութիւն (Բուզ., 145):

Գրաբարի բառապաշարի քննությունից ակնհայտ է, որ այն հարուստ է ժամանականիշ բառերով, և նույն բառերը համապատասխան իմաստներով հանդիպում են տարբեր հեղինակների երկերում:

Ստորև մենք կփորձենք քննության ենթարկել գրաբարի ժամանականիշ բառերը՝ անհրաժեշտաբար կատարելով որոշակի դասակարգումներ, որպեսզի ամբողջական կերպով ներկայացնենք այդ կարգի միավորների բառաքերականական բնութագիրը: Ըստ այդմ, ժամանականիշ բառերը քննելու ենք ըստ ձևաիմաստային խմբերի՝ անհրաժեշտաբար հաշվի առնելով նաև քերականական այլ հատկանիշներ հս:

Ժամանակային հոմանիշներ. Գրաբարում ժամանականիշ բառերի իմաստային խումբը հարուստ է հոմանիշներով: Հոմանիշներ են կոչվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք ունեն մոտ կամ նույն իմաստներ և միաժամանակ կարող են տարբերվել ոճական կիրառությամբ, հուզարտահայտչական գունավորմամբ, գործածականությամբ և ուրիշ բառերի հետ կապակցվելու տարբեր ունակությամբ, ինչպես՝ անդադար-շարունակաբար, անեղեկոյ- մշտատիւ, աղջամղջել- մթագնել, անցիկ- Ջատիկ- պասէք, հասարակօրութիւն- զուգօրութիւն, անխավար- լուսաւոր, այգ- առաւաւտ, միշտ- յաւիտեան, գարուն- գարնայնի և այլն:

Հոմանիշները դասակարգվում են նաև ըստ խոսքի մասերի պատկանելության՝ գոյականական, ածականական, բայական և այլն: Հոմանշությամբ հարաբերակցվող երկու բառեր կազմում են հոմանշային զույգ, իսկ հոմանշային տարրերի խումբը՝ հոմանշային շարք, իսկ հարաբերակցվող յուրաքանչյուր տարր՝ հոմանշային շարքի անդամ:

Երբ շարքի անդամները իմաստային-գործառական այլնայլ առնչակցություններով լիովին համընկնում են, կոչվում են բացարձակ հոմանիշներ, իսկ երբ

---

[4] *Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Եր., 1973, էջ 222:*

[5] *Հովհաննիսյան Լ., նշվ. աշխ., էջ 74:*

առկա է իմաստային մասնակի համընկնում, շարքի անդամները կոչվում են հարաբերական հոմանիշներ:

Այժմ դիտարկենք գրաբարի ժամանականիշ բառերի հոմանշային զույգերն ու շարքերն ըստ խոսքիմասային արժեքների:

Ա. Հոմանշային զույգեր.

1. Ածականական հոմանիշներ

Անխաւար (միշտ լուսավոր) – լուսաւոր (լույս ունեցող). հմմտ. Լինելոց է շինութիւն... յանխաւար... քաղաքին /Ագաթ., 336/: Լուսաւոր պատմուճանօք զգեցուցանեն /Ագաթ., 8/:

Մշտնջենական (հավերժական) – յաւիտենական (հարատև). հմմտ.

Ծնունդն առաջին... մշտնջենական և յաւիտենական ծնունդ, ի մշտնջենական և յաւիտենական Հօրէն առաջ զամենայն / Ագաթ., 191/:

2. Գոյականական հոմանիշներ

Այգ (կանուխ առավոտ)- առաւաւտ (ցերեկվա սկիզբը). հմմտ. Զայգն զառաւօտն... մատուցանէր /Ագաթ., 28/: Ի լուսանալ առաւօտուն... մատուցանէր /Ագաթ., 433/:

Տիւը և ցերեկը վկայված են հինգերորդ դարից, բայց առաջինը գործածության ավելի վաղնջական ակունքներ ունի:

Ցերեկը շատ ավելի երկար ժամանակահատված է ընդգրկում՝ ձգվելով առավոտից մինչև երեկո, այսինքն՝ օրվա ողջ լուսավոր մասը: Ցերեկը բնիկ հայերեն բառ է՝ երեկ (երեկո) բառից՝ ց նախդրով և նշանակում է «մինչև երեկո եղած ժամանակը»[6] :

Աղայանը «Ընդհանուր և հայկական բառագիտություն» գրքում ցերեկ ժամանականիշ բառի հետ կապված նշում է. «Բնիկ հայերեն երեկ արմատից են սերում երեկ- երեկո- ցորեկ ձևերը, որոնք իմաստային զարգացում են ապրել և բնեռացել հետևյալ կերպ. երեկ-ը, որը գրաբարում «երեկո» իմաստն ուներ, ամրակայվեց «նախորդ օրը» իմաստով, երեկո-ն ձեռք բերեց օրվա վերջին լուսավոր ժամանակահատվածի իմաստը, իսկ ց նախդրով ածանցված ցերեկ բառը «մինչև երեկո ընկած ժամանակահատվածը» իմաստով սկսեց կիրառվել՝ դուրս մղելով գրաբարյան տիւ ժամանականիշը»[7]: Հմմտ.

Ոչ կարէր բանիցն տալ պատասխանի մինչև ցերեկոյ /Կորդ., 87/: Զի այն ինն տիւ էր և ինն գիշեր / Ագաթ., 546/:

Ամ (տարի)- տարի (տասներկու ամսվա տևողություն). Ոսկեդարում ամ և տարի բառերը հոմանշային զույգ են: Սակայն հինգերորդ դարից տարին հիմնականում օրացուցային և տոմարական հասկացություն է դառնում, իսկ ամը բազմիմաստ է, որը պայմանավորված է երա հնդեվրոպական ծագումով:

Հմմտ. Հնգետասան ամ է, զի ընկեցին:/ Ագաթ., 17/: Եւ նա ծածկեալ բռնացեալ ուներ զերկիրն առ հասարակ իբրև տարի մի/ Բուզ., 15/:

---

[6] *Ամատունի Հր., Հայերեն արմատական բառարան, հ. 4, Եր., 1979, էջ 453:*

[7] *Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984, էջ 105:*

3. Մակբայական հոմանիշներ

Միշտ (շարունակ, անդադար)- յաւիտեան (միշտ). հմմտ. Արժան է... ի վերայ քո աղօթել առ ի լինել քեզ միշտ այսպիսի /Խոր., 5/: Թագաւորեսցէ ի վերայ տանն Յակովբայ յաւիտեան /Ագաթ., 188/:

Հոմանշային զույգի անդամները կարող են պատկանել տարբեր խոսքի մասերի, որոնք հարաբերակցվում են որոշակի ընդհանուր հատկանիշով: Այդպես հոմանշային զույգ են կազմում գոյականը և մակբայը, ածականը և մակբայը: Հմմտ.

Գարուն (տարվա առաջին եղանակը)-(գոյ.) - գարնայնի (գարուն, գարնանը)- (մկբ.) - Գարունն.. զայն կերպարանս բերէ /Ագաթ., 336/: Ծառոցն բոյսք բողբոջոյն գարնանայն երևացին /Ագաթ., 331/:

Անժամանակ (անսկիզբն, հավիտենական)- (մկբ.) - մշտնջենաւոր (հավիտենական, հավերժ)- (ած.). Հմմտ. Բարձրացուցանէ զիմաստս... յանկէտ և յանժամանակ / Ագաթ., 41/: Քանզի Շապուհ աղաչեաց... հաստատել զխաղաղութիւն մշտնջենաւոր /Խոր..236/:

Բ. Հոմանշային շարք(եր)

Գրաբարի ժամանականիշ բառերի իմաստային խմբում համեմատաբար սակավ են հոմանշային շարքերը, թեև հանդիպում են եռաշարք և քառաշարք հոմանիշներ: Ըստ խոսքիմասային արժեքների՝ դրանք բաշխվում են մակբայի և բայի տիրույթում, ինչպես՝ անդադար- անդուլ- շարունակ, աղջամղջել-մթագնել- աղօտանալ- նսեմանալ, այգանալ- առաւօտանալ- առաւօտել- լուսանալ և այլն:

Անդադար- անդուլ- շարունակ շարքում կա նաև ձևի իմաստ, ինչպես՝ անդադար (շարունակաբար, միշտ) - անդուլ (անդադար, շարունակ)-շարունակ (չընդմիջվող, անընդհատ): Հմմտ.

Յանենարին ուղիս սաստկութեան անկանի, անդադար հոլովմամբ գլորեալ /Խոր., 314/: Եւ խորհրդակցաց իւրոց անդուլ առնէր հարցումն վասն այսպիսւոյ պատճառի / Խոր., 74/: Այլ և շարունակ քանակն երկակի է, քանզի է որ անշարժ է, և որ շարժուն / Անանուն, 128/:

Ժամանակային հականիշներ. Հականիշները բառային զույգեր են, որոնք արտասանությամբ տարբեր են, իմաստով՝ հակառակ, և յուրաքանչյուր զույգ պատկանում է միևնույն խոսքի մասին:

Հականիշությունը հիմնականում տարածվում է բառերի վրա, ըստ այդմ էլ հականիշներ ասելով՝ ամենից առաջ հասկանում ենք հականիշ բառերը, որոնք ներկայանում են զույգերով: Զույգի անդամներից մեկը կարող է մյուսի հանդեպ հակադիր իմաստներ արտահայտել (հակադրական հականիշներ), կամ էլ մեկը բացասում, ժխտում է մյուսին (ժխտական հականիշներ)[8]:

Գրաբարում հականիշները հիմնականում գոյականներ և մակբայներ են:

Ժամանակային հականիշները, ինչպես ընդունված է, կարելի է ներկայացնել հակադրական և ժխտական տեսակներով:

---

[8] *Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 313:*

1. Հակադրական հականիշներ.

Հակադրական հականիշների բաղադրիչները հիմնականում արտահայտվում են մակբայ խոսքի մասով, հազվադեպ գոյականով:

ա) Մակբայական արժեք ունեն միշտ (շարունակաբար)- երբէմն (մի ժամանակ, մի անգամ), այսօր (ընթացիկ՝ ներկա օրը)- երեկ (այսօրվան նախորդած օրը). հականիշների բաղադրիչները հմմտ.

Արժան է... ի վերայ քո աղոթել՝ առ ի լինել քեզ միշտ այսպիսի /Խոր., 5/: Յորում և մեք իբրև զձեռդ երբէմն զերեկելիսս կարծէաք արարիչ /Եղ., 168/:

բ) Գոյականական արժեք ունեն՝

Տիւ (ցերեկ, օրվա լուսավոր ժամանակը)- երեկոյ (մութն ընկնելու ժամանակը). հմմտ. Զի այն ինն տիւ էր և ինն գիշեր / Ագաթ., 235/: Իսկ... երեկոյ եղեւ ժամ ընթերաց թագաւորին Պարսից /Կողբ., 142/:

Տիւ (ցերեկ, օրվա լուսավոր ժամանակը) -գիշեր (օրվա մի մասը՝ մայրամուտից մինչև լուսաբաց). հմմտ. Որ տիւ իցէ և ոչ գիշեր /Ագաթ., 235/:

Հակադրական հականիշները, ըստ իրենց ձևաբանական և բառակազմական առանձնահատկությունների, լինում են տարաբնույթ կառուցվածքի:

2. Ժխտական հականիշներ.

Ժխտական հականիշները նույնաբնույթ կազմություններ են, որոնց հականշությունն արտահայտվում է ժխտական նախածանցների միջոցով: Այդպիսի հականիշների բաղադրիչները հաճախ դուրս են գալիս միևնույն խոսքի մասի սահմաններից՝ պայմանավորված ածանցի բառակազմական նշանակությամբ:

Հմմտ. Ժամանակ (տևողություն, որ չափվում է ժամերով) - անժամանակ (որի համար ժամանակ չկա). հմմտ.

Զորոյ անմահութիւն ի դէպ ժամանակի հանիմանեսցուք /Կողբ., 196/: Բարձրացուցանէ զիմոնարիս... յանկէտ և յայնժամանակ /Ագաթ., 41/:

Ժխտական հականիշները զգալիորեն ցածր տեսակարար կշիռ ունեն գրաբարի բառային կազմում:

Ժամանականիշ բաղադրիչով համանունական զույգեր

Համանուններ են կոչվում այն բառերը, որոնք նույնն են գրությամբ կամ արտասանությամբ և տարբերվում են միայն իմաստաբանորեն կամ քերականորեն, կամ էլ միաժամանակ թե՛ իմաստաբանորեն, թե՛ քերականորեն[9]:

Տվյալ դեպքում մենք դիտարկել ենք այն համանունները, որոնց բաղադրիչներից մեկն ունի ժամանակային իմաստ՝ արտահայտված գոյականով կամ մակբայով, իսկ մյուս բաղադրիչն ունի անկախ բառական արժեք: Այսպիսի համանունները համարվում են բառական համանուններ:

Ժամանականիշ համանունների բաղադրիչները արտահայտվում են՝

ա) գոյականներով. պահ[1]- ժամանակ- պահ[2] -պահեստ, շար[1]- 360 տարվա ժամանակաշրջան- շար[2] -մետաքսից թափանցիկ ու նուրբ գործվածք, դար[1] -հարյուր տարվա ժամանակահատված -դար[2] -բարձունք, բարձրադիր վայր և այլն:

---

[9] *Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1999, էջ 115:*

բ) գոյականով և ածականով. արբուն[1]- հաստություն, չափահասություն- արբուն[2] -ըմպելի, խմելու պիտանի, հարմար,

գ) մակբայով և դերանունով. անտի[1]- այն ժամանակից- անտի[2] –այն. հմմտ.

Անտի յայտ է թէ եւ բաւանդակ իսկ չարեացն արարիչ Աստուած/ Կողբ., 35/:

Ազատել զհոգիսն ի տանջանաց անտի /Կողբ., 273/:

դ) մակբայով և գոյականով. արդ[1]- այժմ, ներկայումս, հիմայ- արդ[2] –հարդարանք, արդուզարդ. հմմտ.

Արդ ... կամաւ և սիրով յայն առէք / Փարպ., 44/: Ոչ միայն արդուց և զարդուց և կերպարանայ արարիչ /Կողբ., 27/:

Ինչպես ցույց են տալիս լեզվական փաստերը, գրաբարի բառային կազմում որոշակիորեն շատ են գոյականական բաղադրիչներով կազմված համանունական զույգերը, որոնցից մեկը, ինչպես նշել ենք, արտահայտում է ժամանակային իմաստ:

ա) Սկզբնաղբյուրներ

1. Ագաթ.- Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1957:

2. Անեաղթ-Անեաղթ Դաւիթ, Սահմանք իմաստասիրութեան, Ե., 1960:

3. Աստվածաշունչ, Աստվածաշնչի վերապատում 1896 թվականի արևելահայերեն «Արարատ» հրատարակությունից, Bible League International, 2010:

4. Բուզ.- Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1960:

5. Եղ.-Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Ե., 1957:

6 Խոր.-Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:

7. Կողբ.-Երզնկայ Կողբացւոյ Բազրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

բ) Բառարաններ

- Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ.հ. 2-4, ԵՊՀ հրատ., Երևան, 1973- 1979:
- Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Սուրբ Ղազար, Վենետիկ, 1865:
- Աւետիքեան Գ., Միւրմէլեան Խ., Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, ի տպարանի Սրբոյն Ղազարու, հ.հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837:
- Գաբամաճեան Ս., Նոր բառգիրք հայերէն լեզուի, Տպագրութիւն Ռ. Սագաեան, Կ. Պոլիս, 1910:
- Խաչատրյան Լ., Գրաբարի ուսումնական բառարան, Երևան, 2013:
- Ղազարեան Ռ., Գրաբարի հոմանիշների բառարան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, Անթիլիաս, 2006:
- Ղազարեան Ռ., Գրաբարի բառարան, ԵՊՀ Հրատարակչութիւն, հ.հ. Ա-Բ, Երեւան, 2000:
- Պետրոսյան Հ., Հայրենագիտական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 1987:

СМЫСЛОВОЕ ЗНАЧЕНИЕ СЛОВ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА, ПОКАЗЫВАЮЩИХ ВРЕМЯ

Резюме *С. Давтян*

В статье подлежат разбору древнеармянские слова, показывающие время, и выделяются их их видосмысловые группы: синонимы, антонимы, омонимы. Из омонимичных пар один член выражает временной смысл.

Синонимы, антонимы, и омонимы показывающие время, в основном являются существительными и наречиями.

	Существительные	наречия
Синоним	рассвет- утро	беспрерывно-постоянно
Антоним	время - не время	сегодня - вчера
Омоним	век - неровность поверхности	актуально-украшение

Смысловые все три группы представлены как парами, так и рядами, однако в древнеармянском языке лидируют двучленные структуры.

Տեղեկություններ հեղինակի մասին

Դավթյան Սիրարփի Անատոլի– ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հայցորդ,
Երևանի Գ. Էմինի անվան թիվ 182 ավագ դպրոց, E-mail: bubush@inbox.ru